



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018թ. հունվարի 16-ին, N 3-Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակի Գ. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2018 թվականի հունվարի 15-ի գրությունը՝ **որոշում եմ**.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին» N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)«Աշտարակի Գ. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում «Ազատյան Վարուժան» բառերը փոխարինել «Զիջյան Նարինե» բառերով:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ